«16» սեպտեմբերի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«Էյ Սի ի Գրուպ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև ՀՏԶՀ) կողմից «Օդորակիչների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Էյ Սի ի Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Մասնակից):

Ընթացակարգի հրավերի 4-րդ բաժնով սահմանված է եղել նաև ապրանքի նկարագրի ներկայացման պահանջ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու պահանջը, որին անհամապատասխանության հայտնաբերմամբ պայմանավորված՝ Մասնակցին ուղարկվել է ծանուցում, որով նկարագրվել է անհամապատասխանությունները և առաջարկվել է շտկել դրանք, մասնավորապես ծանուցմամբ հայտնվել է, որ

1. տեխնիկական մասնագիրը թերի է ներկայացված՝ ոչ ամբողջական,

բացակայում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության փաստաթղթերը:

2. Մասնակցի կողմից ներկայացված նկարագրում նշված է՝ «... հատակը/ կողմերը- Կոնկրետացրեք նյութն ու որակը, ...», ինչը նույնությամբ կրկնում է հրավերով նկարագրին տրվող պահանջը, հետևաբար անհրաժեշտ է ոչ թե կրկնել հրավերի համապատասխան գրառումը, այլ՝ հստակ նշել հատակի և կողմերի նյութն ու որակը:

Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից ներկայացված շտկումը թերի է ներկայացվել, մասնավորապես՝ անհամապատասխանությունների մասին ծանուցմամբ պահանջվել է ներկայացնել առաջարկվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության փաստաթղթերը, ինչին ի պատասխան ներկայացված շտկված փաստաթղթերով չեն ներկայացվել հայտով առաջարկվող ապրանքի՝ Dongfeng ապրանքային նշանի EQ1090 մակնիշի տրանսպորտային միջոցը, սակայն ներկայացվել է TC RU E-RU.АБ58.01206 համարի <<Одобрение типа транспортного средства>> փաստաթղթի N1 հավելվածը, ընդ որում, նշված փաստաթուղթը չի պարունակում առաջարկվող՝ EQ1090 մակնիշի (մոդելի) տրանսպորտային միջոցի վերաբերյալ որևէ տվյալ, հետևաբար չի կարող հանդիսանալ առաջարկվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր

անհամապատասխանությունները չեն շտկվում, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն դեպքում, Ընկերության կողմից ներկայացված հայտի գնահատման ընթացքում գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կողմից արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչի արդյունքում Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ ծանուցմանն ի պատասխան Ընկերության կողմից ներկայացվել են որոշակի փաստաթղթեր, սակայն չեն ներկայացվել պահանջված փաստաթղթերը շտկված վիճակում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ գնահատող հանձնաժողովը, վերոնշյալից ելնելով և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 42-րդ կետով, որոշել է Ընկերության հայտն անբավարար գնահատել և մերժել այն:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: ...:

Վերոգրյալից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է նաև այն մասնակիցը, որը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը:

Այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ընդգրկելու համար անհրաժեշտ է միաժամանակյա երկու պայմանների առկայություն, երբ՝

1. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը

2. մասնակցի կողմից հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի ապահովման, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները չեն վճարվել:

Միաժամանակ հարկ է նշել, որ Մասնակցի կողմից հայտի ապահովման գումարը չի վճարվել:

Նման պարագայում գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի

ղեկավարի կողմից կայացվում է պատճառաբանված որոշում՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Տվյալ դեպքում, Ընկերությունը հայտ է ներկայացրել՝ մասնակցելու ԿԳԿԿ/ԺԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգին, որպիսի հայտում առկա են եղել անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջներին, ինչի մասին վերջինս պատշաճ ծանուցվել է, սակայն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որի հետևանքով վերջինիս հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այսինքն վերջնանշված գործողությունները հանգեցրել են գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, ամբողջ վերոգրյալից ելնելով՝ հարկ է արձանագրել, որ ԿԳԿԿ/ԺԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/5 ծածկագրով գնման ընթացակարգի առնչությամբ առկա է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական և իրավական անհրաժեշտ [illegible] հիմքերը, որոնք նախատեսված են «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և նույն հոդվածի 2-րդ մասը

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Էյ Սի ի Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01284593) ընդգրկել «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը տրամադրել լիազոր մարմնին և դրա մասին ծանուցել «Էյ Սի ի Գրուպ» ՍՊԸ-ին:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**